Ֆինանսական հաշվետվություններ և

Անկախ աուդիտորական եզրակացություն

Հայաստանի Հանրապետության

Հաշվեքննիչ պալատ պետական մարմին

31 դեկտեմբերի 2022թ.

# Բովանդակություն

| | Էջ |
|---|---|
| Անկախ աուդիտորական եզրակացություն | 3 |
| Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն | |
| Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն | |
| Զուտ ակտիվներում (սեփական կապիտալում) փոփոխությունների մասին հաշվետվություն | |
| Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն | |
| Ծանոթագրություններ | |

"Ֆոր Էյ Քնսալթինգ" ՓԲԸ audit accounting advisory "Four A Consulting" CJSC assurance

ՀԱՊ ՀԿ Ռեեստր 1 20 0219
Հասցե Նալբանդյան50/136 , ք. Երևան ՀՀ,
Հեռախոս +374(10) 52 08 47

www. 4aconsulting.am
info@4aconsulting.am

CAA NGO Register 1 20 0219
Address Nalbandyan 50/136, Yerevan, RA
Telephone +374(10) 52 08 47

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար -գլխավոր քարտուղար պարոն Դավիթ Առաքելյանին,**

**ՀՀ Հաշվեքննիչ պալատ ՊՄ-ի գլխավոր քարտուղար պարոն Վազգեն Հարությունյանին,**

## Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Հանրապետության Հաշվեքննիչ պալատ ՊՄ-ի (այսուհետ՝ «Պալատ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2022թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվներում (սեփական կապիտալում) փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Պալատի 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարիների ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի (ՀՀՀՀՍ) :

## Կարծիքի հիմքեր

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ "*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*" բաժնում: Մենք անկախ ենք Պալատից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված "Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի" (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

## Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր ՀՀՀՀՍ-ի համաձայն, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Պալատի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար:
Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

## Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:
Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Աշխատակազմի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Աշխատակազմի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:

Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

12 դեկտեմբեր 2023թ.
Անիկ Մարտիրոսյան
Տնօրեն/Աուդիտի ղեկավար

«ՖՈՐ ԷՅ ՔՆՍԱԼԹԻՆԳ» "FOUR A CONSULTING" 00148693

Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի
2017թ. հունվարի 30-ի թիվ 27-Ն հրամանի

**ՀՀ հաշվեքննիչ պալատ**

կազմակերպության անվանումը

# Ֆինանսական հաշվետվություններ

"31" դեկտեմբերի 2022թ.

հաշվետու ժամանակաշրջանը

Կազմակերպության հասցեն **ՀՀ, ք.Երևան, Բաղրամյան 19**

Անվանումը

Վերադաս մարմինը

կոդը

Թվային ցուցանիշների չափման միավորը **հազար դրամ**

## Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

| Ակտիվ | Տող | Ծնթ | 2022թ / հաշվետու/ | 2021թ / նախորդ/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | | | | |
| Հիմնական միջոցներ | 010 | 4 | 67797,0 | 89687,0 |
| Ոչ նյութական ակտիվներ | 020 | 5 | 1835,0 | 2155,0 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | 080 | | | |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | 090 | | 69633,0 | 91842,0 |
| | | | | |
| Պաշարներ | 100 | 8 | 12877,0 | 12348,0 |
| Դեբիտորական պարտքեր փոխանակվող գործարքների գծով | 110 | | 5730,0 | 3464,0 |
| Դեբիտորական պարտքեր չփոխանակվող գործարքների գծով | 120 | | | 5,0 |
| Ընթացիկ ֆինանսական ակտիվներ | 130 | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 140 | | | |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | 150 | | 18607,0 | 15817,0 |
| **Ընդամենը ակտիվներ** | 160 | | 88240,0 | 107659,0 |
| | | | | |
| ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ (ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ) | | | | |
| Ներդրված կապիտալ | 170 | | | |
| Կուտակված հավելուրդ (պակասուրդ) | 180 | | -16678,0 | -70186,0 |
| Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճ | 190 | | | |
| Այլ պահուստներ | 200 | | | |
| **Ընդամենը զուտ ակտիվներ (սեփական կապիտալ)** | 210 | | -16678,0 | -70186,0 |

| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | Տող | | 2022թ / հաշվետու/ | 2021թ / նախորդ/ |
|---|---|---|---|---|
| | | | | |
| Պայմանով ստացված ակտիվների գծով ոչ ընթացիկ հետաձգված հասույթներ | 220 | 6 | 69633,0 | 91842,0 |
| Ոչ ընթացիկ պահուստներ | 260 | | | |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | 270 | | 69633,0 | 91842,0 |
| | | | | |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր փոխանակվող գործարքների գծով | 320 | 7 | 35261,0 | 86004,0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Պարտքեր չփոխանակվող գործարքների գծով | 330 | | 24,0 | |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 340 | | 35285,0 | 86004,0 |
| Ընդամենը պարտավորություններ | 350 | | 104918,0 | 177846,0 |
| Ընդամենը զուտ ակտիվներ (սեփական կապիտալ) և պարտավորություններ | 360 | | 88240,0 | 107659,0 |

Գլխավոր քարտուղար

ստորագրություն Վազգեն Հարությունյան

Գլխավոր հաշվապահ

ստորագրություն Նինա Սահակյան

ստորագրման ամսաթիվ 21.03 2023թ

## Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

| ՀԱՍՈՒՅԹՆԵՐ | Տող | Ծնթ | 2022թ / հաշվետու/ | 2021թ / նախորդ/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Փոխանակվող գործարքներից հասույթներ | | | | |
| Բյուջեի ֆինանսավորմամբ» ծառայությունների մատուցումից հասույթներ | 010 | 9 | 984364,0 | 1112148,0 |
| Հաճախորդներին ծառայությունների մատուցումից հասույթներ | 020 | | | |
| Ապրանքների վաճառքից հասույթներ | 030 | | | |
| Ֆինանսական հասույթներ | 040 | | | |
| Փոխանակվող այլ գործարքներից հասույթներ | 050 | | 4,0 | |
| **Ընդամենը փոխանակվող գործարքներից հասույթներ** | 060 | | 984368,0 | 1112148,0 |
| | | | | |
| Չփոխանակվող գործարքներից հասույթներ | | | | |
| Պայմանով ստացված ակտիվների հետ կապված հասույթներ | 070 | 10 | 23649,0 | 19535,0 |
| Առանց պայմանների կատարման պահանջի (անհատույց) ստացված ակտիվների հետ կապված հասույթներ | 080 | | | |
| Չփոխանակվող այլ գործարքներից հասույթներ (օգուտներ) | 090 | | | |
| **Ընդամենը չփոխանակվող գործարքներից հասույթներ** | 100 | | 23649,0 | 19535,0 |
| **Ընդամենը հասույթներ** | 110 | | 1008017,0 | 1131683,0 |

| ԾԱԽՍԵՐ | Տող | Ծնթ | 2022թ / հաշվետու/ | 2021թ / նախորդ/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Ընդամենը `Բյուջեից ֆինանսավորմամբ ծառայությունների մատուցման ծախսեր (իրականացված ծրագրերի ինքնարժեք) այդ թվում` | 120 | | -953892,0 | -1153551,0 |
| Այլ ծախսեր (կորուստներ) | 180 | | -617,0 | -219,0 |
| **Ընդամենը ծախսեր** | 190 | | -954509,0 | -1153770,0 |

| ԱՅԼ ՕԳՈՒՏՆԵՐ (ՎՆԱՍՆԵՐ) | Տող | Ծնթ | 2022թ / հաշվետու/ | 2021թ / նախորդ/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Հիմնական միջոցների և այլ ոչ ընթացիկ ակտիվների օտարումից օգուտներ (վնասներ) | 200 | | | |
| Նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ (վնասներ) | 210 | | | |
| Հավելուրդ (պակասուրդ) նախքան շահութահարկով հարկումը | 220 | | 53508,0 | -22087,0 |
| Շահութահարկի գծով ծախս | 230 | | | |
| Հաշվետու ժամանակաշրջանի հավելուրդը (պակասուրդը) | 240 | | 53508,0 | -22087,0 |
| Վերագրելի՝ | | | | |
| Փոքրամասնության բաժնեմասին վերագրելի հավելուրդը (պակասուրդը) | 250 | | | |
| Վերահսկող կազմակերպության սեփականատերերին վերագրելի հավելուրդը (պակասուրդը) | 260 | | | |

Գլխավոր քարտուղար

ստորագրություն Վազգեն Հարությունյան

Գլխավոր հաշվապահ

ստորագրություն Նինա Սահակյան

ստորագրման ամսաթիվ 21.03.2023թ

# Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

| Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից | Տող | 2022թ. /հաշվետու/ | 2021թ. /նախորդ/ |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Ներհոսքեր գործառնական գործունեությունից | | | |
| Բյուջեի ֆինանսավորմամբ» ծառայությունների մատուցումից | 010 | 984423,0 | 1112348,0 |
| Որպես գործակալ գումարների հավաքագրումից | 060 | 9302,0 | 9229,0 |
| Գործառնական գործունեությունից այլ ներհոսքեր | 070 | 3755,0 | 430,0 |
| **Ընդամենը գործառնական գործունեությունից ներհոսքեր** | 080 | 997480,0 | 1122007,0 |
| | | | |
| Արտահոսքեր գործառնական գործունեությունից | | | |
| Աշխատակիցներին և նրանց անունից դրամական վճարումներ | 090 | -862039,0 | -970809,0 |
| Ծառայությունների ձեռքբերումների դիմաց վճարումներ | 100 | -48015,0 | -47618,0 |
| Նյութերի, ապրանքների և այլ պաշարների ձեռքբերումների դիմաց վճարումներ | 110 | -12682,0 | -12901,0 |
| Գործուղումների հետ կապված վճարումներ | 120 | -25391,0 | -40357,0 |
| Հարկերի և այլ պարտադիր վճարների հետ կապված վճարումներ | 130 | -37237,0 | -36847,0 |
| Որպես գործակալ ստացված գումարների գծով պարտավորության մարման հետ կապված վճարումներ | 140 | -9302,0 | -9229,0 |
| Գործառնական գործունեությունից այլ արտահոսքեր | 150 | -2813,0 | -4246,0 |
| **Ընդամենը գործառնական գործունեությունից արտահոսքեր** | 160 | -997480,0 | -1122007,0 |
| **Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ»** | 170 | | |

| Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից | Տող | 2022թ. /հաշվետու/ | 2021թ. /նախորդ/ |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Հիմնական միջոցների և այլ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար բյուջեից պայմանով ստացված գումարների գծով ներհոսքեր | 180 | 1440,0 | 22679,0 |
| Հիմնական միջոցների և այլ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար այլ կազմակերպություններից | 190 | | |
| Հիմնական միջոցների վաճառքից ներհոսքեր | 200 | | |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվների վաճառքից ներհոսքեր | 210 | | |

| | | | |
|---|---|---|---|
| Հիմնական միջոցների ձեռքբերման հետ կապված արտահոսքեր | 220 | -1440,0 | -22679,0 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման հետ կապված արտահոսքեր | 230 | | |
| Ներդրումային գործունեությունից այլ ներհոսքեր | 240 | | |
| Ներդրումային գործունեությունից այլ արտահոսքեր | 250 | | |
| **Ներդրումային գործունեության միջոցով օգտագործված զուտ դրամական միջոցներ»** | 260 | | |

| Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից | Տող | 2022թ. /հաշվետու/ | 2021թ. /նախորդ/ |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Վարկերի և փոխառությունների ստացումից ներհոսքեր | 270 | | |
| Վարկերի և փոխառությունների մարման հետ կապված արտահոսքեր | 280 | | |
| Տոկոսների վճարման հետ կապված արտահոսքեր | 290 | | |
| Ֆինանսավորման գործունեությունից այլ ներհոսքեր | 300 | | |
| Ֆինանսավորման գործունեությունից այլ արտահոսքեր | 310 | | |
| **Ֆինանսավորման գործունեության միջոցով օգտագործված զուտ դրամական միջոցներ** | 320 | | |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ (նվազում)** | 330 | | |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի 2022թ | 340 | | |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | 350 | | |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի 2022թ** | 360 | | |

Գլխավոր քարտուղար ստորագրություն Վազգեն Հարությունյան

Գլխավոր հաշվապահ ստորագրություն Նինա Սահակյան

ստորագրման ամսաթիվ 21.03.2023թ

Զուտ ակտիվներում (սեփական կապիտալում) փոփոխությունների մասին հաշվետվություն

| | Տող | Կազմակերպությունը վերահսկող սեփականատերերին վերագրվող | | | | Փոքրամասնության բաժնեմասը | Ընդամենը զուտ ակտիվ (սեփական կապիտալ) |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ներդրված կապիտալ | Այլ պահուստներ | Կատարված հավելուրդ (պակասուրդ) | Ընդամենը | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| Մնացորդ առ 01 Հունվարի 2021 թ. | 010 | | | -48099,0 | -48099,0 | | -48099,0 |
| Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների և | 020 | | | | | | |
| **Վերահաշվարկված մնացորդ** | **030** | | | **-48099,0** | **-48099,0** | | **-48099,0** |
| **Փոփոխություններ զուտ ակտիվներում** | | | | | | | |
| Հողամասերի և շենքերի վերագնահատումից արժեքի ավելացում | 040 | | | | | | |
| Նախորդ ժամանակաշրջանի հավելուրդ (պակասուրդ) | 050 | | | -22087,0 | -22087,0 | | -22087,0 |
| Շարժեր զուտ ակտիվների (սեփական կապիտալի) հոդվածների միջև | 060 | | | | | | |
| Մնացորդ առ 31 Դեկտեմբերի 2021 թ. | 070 | | | -70186,0 | -70186,0 | | -70186,0 |
| **Զուտ ակտիվներում (սեփական կապիտալում) փոփոխությունների մասին հաշվետվություն հաշվետվություն** | | | | | | | |
| Մնացորդ առ 01 Հունվարի 2022 թ. | 080 | | | -70186,0 | -70186,0 | | -70186,0 |
| Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ և սխալների ուղղում | 090 | | | | | | |
| | 091 | | | | | | |
| **Վերահաշվարկված մնացորդ** | **100** | | | **-70186,0** | **-70186,0** | | **-70186,0** |
| **Փոփոխություններ զուտ ակտիվներում (սեփական կապիտալում) 2022թ-ին** | | | | | | | |
| Հողամասերի և շենքերի վերագնահատումից արժեքի ավելացում | 110 | | | | | | |
| Հաշվետու ժամանակաշրջանի հավելուրդ (պակասուրդ) | 120 | | | 53508,0 | 53508,0 | | 53508,0 |
| Շարժեր զուտ ակտիվների ( սեփական կապիտալի ) հոդվածների միջև | 130 | | | | | | |
| Մնացորդ առ 31 Դեկտեմբերի 2022 թ. | 140 | | | -16678,0 | -16678,0 | | -16678,0 |

Գլխավոր քարտուղար ստորագրություն Վազգեն Հարությունյան

Գլխավոր հաշվապահ ստորագրություն Նինա Սահակյան

ստորագրման ամսաթիվ 21.03.2023թ

**«ՀՀ հաշվեքննիչ պալատ » պետական մարմին**
**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ**
**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**


1. Հաշվեքննիչ պալատի մասին....................2
2 .Պատրաստման հիմունքները....................2
3 .Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ....................2
4. Հիմնական միջոցներ....................3
5 Ոչ նյութական ակտիվներ....................4
6 Պայմանով ստացված ակտիվների գծով հետաձգված հասույթ.................... 5
7. Պահուստ և կրեդիտորական պարտք....................5
8- Պաշարներ....................6
9 Բյուջեի ֆինանսավորմամբ ծառայությունների մատուցումից հասույթ....................6
10 Պայմանով ստացված ակտիվների հետ կապված հասույթ....................6
11 Վարձակալության ծախսեր.................... 6
12 Ծառայությունների մատուցման ծախսեր (իրականացված ծրագրերի ինքնարժեք)....................6
13 Չփոխանակվող գործարքների գծով այլ ծախսեր.................... 7
14 Գործարքներ ղեկավարության հետ....................7
15 Դեբիտորական պարտքեր փոխանակվող գործարքների գծով....................7
16 Պայմանական պարտավորություն....................7
17 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն .................... 7

**«ՀՀ հաշվեքննիչ պալատ » պետական մարմին**
**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ**
**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**


1. Հաշվեքննիչ պալատի մասին ........................................................................................ 2
2 .Պատրաստման հիմունքները........................................................................................2
3 .Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ........................................ 2
4. Հիմնական միջոցներ........................................................................................................ 3
5 Ոչ նյութական ակտիվներ ...............................................................................................4
6 Պայմանով ստացված ակտիվների գծով հետաձգված հասույթ_......................................... 5
7. Պահուստ և կրեդիտորական պարտք.............................................................................5
8- Պաշարներ...........................................................................................................................6
9 Բյուջեի ֆինանսավորմամբ ծառայությունների մատուցումից հասույթ.................................6
10 Պայմանով ստացված ակտիվների հետ կապված հասույթ.........................................................6
11 Վարձակալության ծախսեր................................................................................................ 6
12 Ծառայությունների մատուցման ծախսեր (իրականացված ծրագրերի ինքնարժեք)................6
13 Չփոխանակվող գործարքների գծով այլ ծախսեր........................................................... 7
14 Գործարքներ ղեկավարության հետ................................................................................. 7
15 Դեբիտորական պարտքեր փոխանակվող գործարքների գծով..........................................7
16 Պայմանական պարտավորություն ................................................................................... 7
17 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն ................................................ 7

## 1 Հաշվեքննիչ պալատի մասին

Հաշվեքննիչ պալատը (ՀՊ ՊՄ) արտաքին պետական հաշվեքննություն (աուդիտ) իրականացնող անկախ պետական մարմին է: ՀՊ ՊՄ-ի գործունության նպատակը հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում պետական և համայնքային բյուջեների միջոցների, ստացված փոխառությունների և վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության վերաբերյալ Ազգային ժողովին և հանրությանը ժամանակին, մասնագիտական և անկողմնակալ տեղեկատվության ներկայացումն է:

2018թ. հունվարի 16-ին ընդունվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է մտել 2018թ. ապրիլի 9-ից: Օրենքի 46 հոդվածի համաձայն ՀՊ ՊՄ-ն հանդիսանում է ՀՀ Վերահսկիչ պալատի իրավահաջորդը:

ՀՊ ՊՄ-ի հիմնական գործառույթներն են.

- Կազմակերպել և իրականացնել պետական բյուջեի և համայնքային միջոցների նկատմամբ հաշվեքննություն,
- Օրենքով նախատեսված դեպքերում իրականացնել ստուգումներ,
- Իրականացնել «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթներ:

## 2 Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀ Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտին (ՀՀՀՀՍ) համապատասխան:
Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 17-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:
Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև ՀՊ ՊՄ-ի գործառնական արժույթը: Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ: ՀՀՀՀՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

### *Անընդհատության սկզբունք*

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

### *Չափման հիմքերը*

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիման վրա:

## 3 Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ՀՊ ՊՄ-ն պետք է կատարի որոշակի հաշվապահական գնահատումներ և դատողություններ, որոնք ազդում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված քաղաքականության և գումարների վրա: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի, ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների և այլ գործոնների վրա: Այնուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից:

- Հիմնական միջոցների մնացորդային նորմատիվային օգտակար ծառայության ժամկետներ – ծանոթագրություններ 4 և 17,Վարձակալության դասակարգումը գործառնական կամ ֆինանսական՝ կապված ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության, բոլոր ռիսկերի ու հատույցներ– ծանոթագրություններ 11 և 17:

**4 , Հիմնական միջոցներ**

| | Ավտոմեքենաներ | Համակարգչային և այլ սարքավորումներ | Գրասենյ ակային գույք | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ |
| *Սկզբնական արժեք* | | | | |
| 1 հունվարի 2021թ. | 62 561 | 135 592 | 9 392 | 207 544 |
| Ավելացումներ | | 22 046 | 184 | 22 230 |
| Դուրս գրումներ | | (768) | (248) | (1 016) |
| Վերադասակարգում | | | | |
| **31 դեկտեմբերի 2021թ.** | **62 561** | 156 869 | 9 327 | 228 758 |
| 1 հունվարի 2022թ. | 62 561 | 156 869 | 9 327 | 228 758 |
| Ավելացումներ | | | | |
| Դուրսգրումներ | **( 2 577)** | (7 625) | | **(10 202)** |
| Վերագնահատում | | | | |
| Վերադասակարգում | | (4 550) | 4 550 | |
| **31 դեկտեմբերի 2022թ.** | **59 984** | **144 695** | **13 877** | **218 556** |
| *Կուտակված մաշվածություն* | | | | |
| 1 հունվարի 2021թ | (27 463) | (89 442) | (4 534) | (121 440) |
| Տարվա մաշվածություն | (6 783) | (11 561) | (700) | (19 045) |
| Դուրսգրումներ | (397) | (768) | (248) | (1 413) |
| Վերադասակարգում | | | | |
| **31 դեկտեմբերի 2021թ.** | **(33 849)** | **(100 235)** | **(4 987)** | **(139 071)** |
| 1 հունվարի 2022թ. | ( 33 849 ) | ( 100 235) | ( 4 987) | (139 071) |
| Տարվա մաշվածություն | ( 7 863) | ( 13 788) | ( 1 321) | **( 22 972)** |
| Դուրս գրումներ | 3 659 | 7 625 | | **11 284** |
| Վերադասակարգում | | 2 410 | (2 410) | **0** |
| **31 դեկտեմբերի 2022թ.** | **( 38 053 )** | **(103 988)** | **( 8 718)** | **( 150 759)** |
| **Ընթացիկ արժեք** | | | | |
| **1 հունվարի 2021թ.** | 35 098 | 46 150 | 4 858) | 86 106) |
| **31 դեկտեմբերի 2021թ.** | 28 712 | 56 635 | 4 340 | 89 687 |
| **31 դեկտեմբերի 2022թ.** | **21 932** | **(40 706** | **5 159** | **67 797** |

Հիմնական միջոցները գրավադրված չեն:

Դեռևս օգտագործման մեջ գտնվող, բայց լրիվ մաշված հիմնական միջոցների սկզբնական արժեքները հետևյալն են

.

| | 2022թ<br>հազ. դրամ | .2021թ<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Համակարգչային և այլ սարքավորումներ | 71 308 | 72 477 |
| Տրանսպորտային միջոցներ | 1 647 | 4 224 |
| Գրասենյակային գույք և այլ հիմնական միջոցներ | 2 902 | 2 598 |
| **Ընդամենը** | 75 857 | **79 298** |

## 5 Ոչ նյութական ակտիվներ

## ա) ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքի համադրում

| | Համակարգչային ծրագրեր |
|---|---|
| ***Համախառն հաշվեկշռային արժեք*** | |
| Մնացորդը առ1 հունվարի 2021թ. | 3 192 |
| Ավելացումներ | 0 |
| Օտարումներ | 0 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.** | 3 192 |
| Մնացորդը առ 1հունվարի 2022թ. | 3 192 |
| Ավելացումներ | 0 |
| Օտարումներ | 0 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.** | 3 192 |
| ***Ամորտիզացիա*** | |
| Մնացորդը առ 1հունվարի 2021թ. | (718) |
| Տարվա ամորտիզացիա | (319) |

[redacted]

| | |
|---|---|
| Օտարումներ | |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.** | (1 037) |
| Մնացորդը Առ 1 հունվարի 2022թ. | (1 037) |
| Տարվա ամորտիզացիա | ( 319) |
| Օտարումներ | |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.** | ( 1 356) |
| ***Հաշվեկշռային արժեք*** | |
| Առ 1հունվարի 2021թ. | 2 474 |
| Առ 31դեկտեմբերի2021. | 2 155 |
| **Առ 31 դեկտեմբերի 2022-թ.** | 1 835 |

**6 Պայմանով ստացված ակտիվների գծով հետաձգված հասույթ**

| | 2022թ<br>հազ. դրամ | 2021 թ<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Մեքենաների և սարքավորումների գծով | 63 623 | 83 830 |
| Ոչ նյութական ակտիվերի գծով | 1 835 | 2 155 |
| Գրասենյակային և տնտեսական գույքի գծով | 2 981 | 3 755 |
| Այլ կազմակերպություններից ստացված մեքենաների և սարքավորումների գծով | 709 | 1 517 |
| Այլ կազմակերպություններից ստացված գրասենյակային և տնտեսական գույքի գծով | 395 | 472 |
| Բյուջեից ստացված գրասենյակային և տնտեսական գույքի գծով | 90 | 114 |
| Ընդամենը | 69 633 | 91 842 |

**7 Պահուստ և կրեդիտորական պարտքեր**

| | **2022թ**<br>**հազ.դրամ** | **2021 թ**<br>**հազ.դրամ** |
|---|---|---|
| Չօգտագործված արձակուրդի գծով պահուստ | 32 764 | 83 570 |
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 2 497 | 2 434 |
| Հարկերի գծով | **24** | |
| Ընդամենը | 35 285 | 86 004 |

Չօգտագործված արձակուրդային պահուստի գծով պետական բյուջեից ֆինանսավորումը իրականացվում է արձակուրդի տրամադրման ժամանակաշրջանում:

**8 Պաշարներ**

| | **2022 թ**<br>**հազ. դրամ** | **2021 թ**<br>**հազ. դրամ** |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| Կենցաղային և գրասենյակային նյութեր | 10 712 | 10 026 |
| Պահեստամասեր և վառելիք | 2 165 | 2 322 |
| Ընդամենը | 12 877 | 12 348 |

**9 Բյուջեի ֆինանսավորմամբ ծառայությունների մատուցումից հասույթ**

| | 2022 թ<br>հազ.դրամ | 2021 թ<br>հազ.դրամ |
|---|---|---|
| Բյուջեի ֆինանսավորմամբ ծրագրերի իրականացումից հասույթ | 984 364 | 1 112 148 |

10 **Պայմանով ստացված ակտիվների հետ կապված հասույթ**

| | 2022թ<br>հազ, դրամ | 2021թ<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Պայմանով ստացված ակտիվների գծով հասույթ | 23 649 | 19 535 |

**11 Վարձակալության ծախսեր**

Վարձակալության ծախսերը վերաբերել են ք. Երևանում գրասենյակային տարածքի վարձակալությանը: Վարձակալությունը կնքված է անորոշ ժամկետով և կարող է վաղաժամկետ չեղարկվել: Վարձակալությունը դասակարգվել է որպես գործառնական վարձակալություն:

ՀՊ ՊՄ-ն անհատույց ու անորոշ ժամկետով զբաղեցնում է ՀՀ Ազգային ժողովի տարածքում գտնվող մեկ մասնաշենք:

| | 2022 թ<br>հազ դրամ | 2021թ<br>հազ դրամ |
|---|---|---|
| Վարձակալության ծախսեր | **33 086** | **33 086** |

**12 . Ծառայությունների մատուցման ծախսեր ( իրականացված ծրագրերի ինքնարժեք)**

| | 2022թ.<br>հազ.դրամ | 2021թ.<br>հազ.դրամ |
|---|---|---|
| Աշխատավարձի հատուցման գծով ծախսեր | 843 403 | 1 029 423 |
| Հիմնական միջոցի մաշվածության գծով ծախս | 23 292 | 19 365 |
| Նյութերի գծով ծախս | 12 154 | 13 332 |
| Հիմնական միջոցների նորոգման և սպասարկման ծախսեր | 2 573 | 2 322 |
| Գործուղման ծախսեր | 23 598 | 40 161 |
| Էլեկտրաէներգիայի, կապի և կոմունալ ծախսեր | 6 407 | 6 891 |
| Ներկայացուցչական ծախսեր | 1 200 | 229 |
| Համակարգչային ծառայությեւնների հետ կապված ծախսեր | 4 545 | 4 567 |
| Ծառայությունների մատուցման հետ վապված այլ ծախսեր | 3 634 | 4 176 |
| Ընդամենը | **920 806** | **1 120 466** |

| **13. Չփոխանակվող գործարքների գծով այլ ծախսեր** | **2022թ**<br>հազ դրամ | **2021թ**<br>հազ դրամ |
|---|---|---|
| | 617,_ | 219 |

**14 Գործարքներ ղեկավարության հետ**

ՀՊ ՊՄ կազմված է խորհրդի յոթ անդամներից, ովքեր ստացել են հետևյալ վարձատրությունը, ներառված «Աշխատակիցների հատուցումներ» հոդվածում:

| | 2022թ. hազ. դրամ | 2021թ. hազ. դրամ |
|---|---|---|
| **Աշխատավարձ և անաշխատունակության նպաստ** | 75 981 | 78 413 |
| **Պարգևատրում** | 35 348 | 49 436 |
| Ընդամենը | 111 329 | 127 849 |

| 15 **Դեբիտորական պարտքեր փոխանակվող գործարքների գծով** | 2022թ **hազ դրամ** | 2021թ **hազ. դրամ** |
|---|---|---|
| **Դեբիտորական պարտք չվաստակած արձակուրդի գծով** | **5 655** | **3 774** |
| **Աշխատավարձի կանխավճար** | **75** | |
| **Ընդամենը** | **5 730** | **3 774** |

**16 Պայմանական պարտավորություններ**

Հաշվետու ամսաթվի դրությամբ, ՀՊ ՊՄ-ը ընդգրկված չէ որևիցե դատական գործընթացներում, որոնք կարող են էականորեն ազդել ՀՊ ՊՄ-ի ֆինանսական հաշվետվությունների վրա:

**17 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն**

**Հիմնական միջոցներ**

Հիմնական միջոցները նյութական ակտիվներ են,

1) որոնք առկա են ծառայությունների մատուցման կամ վարչական նպատակով,
2) որոնք ակնկալվում է օգտագործել ավելի քան մեկ տարվա ընթացքում,
3) որոնց արժեքը սկզբնական ճանաչման պահին գերազանցում է լիազոր մարմնի (ՀՀ Ֆինանսների նախարարության) կողմից սահմանված չափը (25 հազար դրամ), բացառությամբ համակարգչային տեխնիկայի, գրասենյակային կահույքի և հեռախոսների:

Փոքրարժեք կամ արագամաշ առարկաները նյութական ակտիվներ են, որոնք չեն բավարարում հիմնական միջոցների սահմանման երկրորդ կամ երրորդ կետերի պահանջներին և ընդգրկված են պաշարների կազմում:

Հիմնական միջոցի միավորը որպես ակտիվ ճանաչվելուց հետո չափվում է սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը, բացառությամբ հողամասերի և շենքերի:

Հաշվետու ամսաթվի դրությամբ, ՀՊ ՊՄ-ը չունի հողամասեր կամ շենքեր:

Հիմնական միջոցի միավորը մաշեցվում է իր օգտակար ծառայության ընթացքում: Հիմնական միջոցի միավորի մաշվող գումարը պարբերաբար բաշխվում է ակտիվի օգտակար ծառայության ընթացքում՝ գծային մեթոդով:

Օգտակար ծառայությունը՝

ա) նոր հիմնական միջոցի համար՝ դրա նորմատիվային օգտակար ծառայությունն է, որը սահմանել է լիազոր մարմինը՝ նոր հիմնական միջոցների մաշվածությունը հաշվարկելու համար: ՀՀ Ֆինանսների նախարարի 2016թ. հունվարի 8-ի թիվ 3-Ն հրամանով սահմանված են հետևյալ նորմատիվային օգտակար ծառայության ժամկետները.

- Տրանսպորտային միջոցներ 10 տարի
- Կահույք 10 տարի
- Համակարգիչներ 5 տարի
- Համակարգչային այլ սարքավորումներ 7 տարի
- Գրասենյակային այլ գույք և սարքավորումներ 8 տարի

բ) նախկինում օգտագործված (հին) հիմնական միջոցի համար՝ մնացորդային նորմատիվային օգտակար ծառայությունն է, որը նորմատիվային օգտակար ծառայության այն մասն է, որի ընթացքում ակնկալվում է որ այդ հիմնական միջոցը կօգտագործվի:

Հիմնական միջոցի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն՝ երբ այն գտնվում է այն վայրում և այնպիսի վիճակում, որն անհրաժեշտ է հիմնական միջոցը նախանշած նպատակով օգտագործելու համար:

**Պաշարներ**

Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների արժեքը որոշվում է դրանց կոնկրետ ծախսումների հստակ առանձնացման միջոցով:

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների արժեքը որոշվում է «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» (ՖԻՖՈ) բանաձևով:

**«Բյուջեի ֆինանսավորմամբ» հասույթ**

ՀՊ ՊՄ տարեկան ֆինանսավորումը իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցով, որպես պետական բյուջեի ծախսերի բաղկացուցիչ մաս: Տարեկան հատկացվող գումարի չափը հաստատվում է տվյալ տարվա համար պետական բյուջեով ՀՊ ՊՄ-ի համար սահմանված գումարի չափով:

«Բյուջեի ֆիանսավորմամբ» հասույթը ճանաչվում է տվյալ տարվա ընթացքում բյուջեով ֆինանսավորման ենթակա կատարված ծախսերի չափով:

Համաձայն ՀՀ բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների, դրամարկղերում և գանձապետական հաշիվներում ՀՀ պետական բյուջեի միջոցների առկա մնացորդները տարեվերջով փոխանցվում են ՀՀ պետական բյուջե՝ որպես բյուջետային տարում չօգտագործված միջոցներ:

**Պայմանով ստացված ակտիվներ և նրանց գծով հասույթ**

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման համար ստացված դրամական միջոցները, ինչպես նաև ՀՊ ՊՄ-ին անմիջականորեն փոխանցված հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները հանդիսանում են պայմանով փոխանցված ակտիվներ: Նշված հիմնական միջոցների և ոչ նյութական

ակտիվների գծով պայմանն այն է, որ դրանք պետք է օգտագործվեն համապատասխանաբար որպես հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ՝ ՀՊ ՊՆ-ի գործունեության նպատակների համար:

Պայմանով ստացված ակտիվների գծով հասույթը ճանաչվում է այդ ակտիվների մաշվածությանը (ամորտիզացիային) համապատասխան:

**Աշխատակիցների հատուցումներ**

Աշխատակիցների հատուցումները աշխատակիցների կողմից մատուցված ծառայության դիմաց ցանկացած ձևով տրվող հատուցումներն են: Աշխատակիցների հատուցումները ներառում են՝

- աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները, մասնավորապես՝ աշխատավարձը, արձակուրդային գումարները,
- ազատման նպաստները:

**Վարձակալություն**

Վարձակալությունը համաձայնագիր է, որով վարձատուն վճարի կամ վճարների շարքի դիմաց համաձայնեցված ժամկետի ընթացքում վարձակալին է փոխանցում ակտիվի օգտագործման իրավունքը:

Վարձակալությունը դասակարգվում է երկու տեսակի՝ գործառնական կամ ֆինանսական:
*Ֆինանսական վարձակալություն.* երբ վարձակալին է փոխանցում ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Սեփականության իրավունքը կարող է ի վերջո փոխանցվել կամ չփոխանցվել:
*Գործառնական վարձակալություն.* երբ սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները չեն փոխանցվում վարձակալին:
Վարձակալության դասակարգումը ֆինանսականի կամ գործառնականի կատարվում է վարձակալության սկզբի դրությամբ:

Գործառնական վարձակալության գծով վարձավճարները ճանաչվում են որպես ծախս գծային հիմունքով:

**Ոչ նյութական ակտիվներ**

Ոչ նյութական ակտիվը ֆիզիկական սուբստանցիայից զուրկ որոշելի (իդենտիֆիկացվող) ոչ դրամային ակտիվ է, որն առկա է ավելի քան մեկ տարվա ընթացքում շարունակական կամ պարբերաբար օգտագործելու համար:

Եթե կազմակերպությունն անկարող է կատարել ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության արժանահավատ գնահատում, օգտակար ծառայությունը պետք է համարվի տասը տարի:

Ամորտիզացիան սկսում է հաշվարկվել, երբ ոչ նյութական ակտիվը մատչելի է օգտագործման համար, այսինքն՝ երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար:

## Չփոխանակվող գործարքներ

Չփոխանակվող գործարքները այնպիսի գործարքներ են, որոնք չեն հանդիսանում փոխանակվող գործարքներ: Չփոխանակվող գործարքի դեպքում կազմակերպությունը մեկ այլ կազմակերպությունից կամ ստանում է արժեք՝ առանց մոտավորապես հավասար արժեքը որպես փոխանակում ուղղակիորեն տալու,

կամ տալիս է արժեք՝ առանց մոտավորապես հավասար արժեքը որպես փոխանակում ուղղակիորեն ստանալու:

**Պահուստը**

**Պահուստը անորոշ ժամկետով կամ գումարով պարտավորություն է:**

**Պարտավորությունը կազմակերպության ներկա պարտականությունն է՝ որպես կատարված (անցյալ) դեպքերի արդյունք, որի մարումն ակնկալվում է, որ կհանգեցնի կազմակերպությունից տնտեսական օգուտներ կամ օգտակար պոտենցիալ մարմնավորող միջոցների արտահոսքի:**

Գլխավոր քարտուղար

ստորագրություն Վազգեն Հարությունյան

Գլխավոր հաշվապահ

ստորագրություն Նինա Սահակյան

Ստորագրման ամսաթիվ 21.03. 2023թ